

Ճանապարհ, ժամանակ, արագություն

Միավոր ժամանակում մարմնի անցած ճանապարհը նրա շարժման արագությունն է:

Արագությունը կարելի է չափել արագաչափի միջոցով:



Օրինակ՝

Կարող ենք ասել.

Ավտոմեքենան շարժվում է ժամում 70 կմ

արագությամբ, կամ ավտոմեքենան շարժվում է 70կմ/ժ

արագությամբ:

Մարմնի շարժման արագությունը հավասար է նրա անցած ճանապարհի և ծախսած ժամանակի քանորդին:

Այսինքն՝

Արագություն = Ճանապարհ : ժամանակ

Մարմնի անցած ճանապարհը հավասար է նրա շարժման արագության և ճախսած ժամանակի արտադրյալին:

$$\text{Ճանապարհ} = \text{Արագություն} \cdot \text{Ժամանակ}$$

Մարմնի ճախսած ժամանակը հավասար է նրա անցած ճանապարհի և արագության քանորդին:

$$\text{Ժամանակ} = \text{Ճանապարհ} : \text{Արագություն}$$

Խնդիրներ.

- Գնացքը 15 ժամում միևնույն արագությամբ անցավ 1200 կմ ճանապարհ: Որքա՞ն էր գնացքի շարժման արագությունը:

$$1200 : 15 = 80 \text{ կմ ժամ}$$

- Որքա՞ն ճանապարհ կանցնի ավտոմեքենան 7 ժամում, եթե շարժվի 65 կմ/ժ արագությամբ:

$$65 \times 7 = 445 \text{ կմ ժամ}$$

- Հեծանվորդը 4 ժամում ընթացավ 20 կմ/ժ
արագությամբ: Որքա՞ն ճանապարհ նա անցավ:

$$20 \times 4 = 80 \text{ կմ ժամ}$$

- Գնացքը 2 օրում միևնույն արագությամբ անցավ
1600 կմ ճանապարհ: Առաջին օրը նա ճանապարհի
վրա ծախսեց 13 ժամ, իսկ երկրորդ օրը՝ 6 ժամ
պակաս: Որքա՞ն ճանապարհ նա անցավ առաջին
օրը:

$$13 - 6 = 7$$

$$13 + 7 = 20$$

$$1600 : 20 = 80$$

$$13 \times 80 = 1040 \text{ կմ } 5. \text{ Հայկենց տնից կմ}$$

- Հայկենց տնից մինչև դպրոց 320 մ է: Նա դպրոց է
գնացել 40 մ/ր արագությամբ: Որքա՞ն ժամանակ նա
ծախսեց դպրոց գնալու համար:
 $320 : 40 = 8$ րոպե

- Երևանից միևնույն ուղղությամբ դուրս եկան երկու ավտոմեքենա: 3 ժամ հետո որքա՞ն կլինի նրանց միջև եղած հեռավորությունը, եթե առաջին ավտոմեքենան ժամում անցնում է 70 կմ, իսկ երկրորդը՝ 60 կմ:

$$3 \times 70 = 210$$

$$3 \times 60 = 180$$

$$210 - 180 = 30$$

- Մոտոցիկլավարը 200կմ ճանապարհի առաջին 80կմ-ն անցավ 40կմ/ժ արագությամբ, իսկ մնացած մասը՝ 60կմ/ժ արագությամբ: Մոտոցիկլավարը քանի՞ ժամում անցավ այդ ճանապարհը:

$$200 - 80 = 120$$

$$80 : 40 = 2$$

$$120 : 60 = 2$$

$$2 + 2 = 4$$

- Գնացքը 20 ժամում միևնույն արագությանը անցավ 1600 կմ ճանապարհ: Որքա՞ն էր գնացքի շարժման արագությունը: